ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Փետրվարի 2-6-ը Աթենքում կայացավ աշխարհի շուրջ 40 երկրների զինված ուժերում հոգևոր սպասավորների առաջնորդների միջազգային 15-րդ կոնֆերանսը: Ամենամյա այս կոնֆերանսի աշխատանքներին արդեն երկրորդ տարին իր մասնակցությունն է բերում նաև Հայոց բանակի հոգևոր ծառայության խորհրդական Տ. Արշեն աբդ. Սանոսյանը:

Կոնֆերանսի օրերին զանազան հանդիպումների ընթացքում Հայր Սուրբը նախնական համաձայնություններ է ձեռք բերել Ռուսաստանի, Լիտվայի և այլ երկրների հոգևոր առաջնորդների հետ հետագա համագործակցության վերաբերյալ: Այսօր Հայոց բանակում որպես հոգևոր սպասավոր ծառայում է շուրջ 26 հոգևորական և, ինչպես հավաստում է Հայր Արշենը, այս ծառայությունը բավականաչափ առաջընթաց է արձանագրել մի շարք նախկին ԽՍՀՄ երկրների համեմատ:

Առաջիկայում, մայիսի 9-15-ը, Հայոց բանակի հոգևոր սպասավորները կմասնակցեն նաև Գերմանիայում կայանալիք հոգևոր ծառայողների սեմինարին:

Աթենքում գտնվելու օրերին Հայր Արշենը մասնակցել է նաև Հունաստանում ՀՀ դեսպանատան նախաձեռնությամբ կազմակերպված Հայոց բանակի 12-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը՝ ներկաներին փոխանցելով Հայոց Հայրապետի օրհնությունը:

ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԿԱՆԱՆՑ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համակարգում գործող քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայությունը Մարտի 8-ին՝ Կանանց միջազգային տոնի կապակցությամբ, հանդիսություն էր կազմակերպել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Կին կալանավորների համար կազմակերպվել էր համերգ, որի ընթացքում հանդես եկավ «Էջմիածին» մշակութային բարեգործական հիմնադրամի «Տարոն» մանկական գուսանական երգչախումբը: Հանդիսության ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից նվերներ բաժանվեցին ազատազրկված կանանց:

Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայությունը, իբրև առանձին կառույց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործում է ավելի քան երեք ամիս: Հոգևոր ծառայության գրասենյակի պատասխանատու Հովհաննես սրկ. Ռուշանյանն ամենամյա այցերով լինում է Հայաստանի մեկ տասնյակից ավելի քրեակատարողական հիմնարկներում:

Այցերի ընթացքում կալանավորները ծանոթանում են Հայ Եկեղեցու կանոններին և ծեսերին, բարեպաշտական սովորություններին, տոներին ու դրանց խորհուրդներին: Կալանավայրերի գրադարաններին է բաշխվում հոգևոր գրականություն: